ՌԵԳԻՆԱ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1915–1916 թթ. Հայոց Մեծ Եղեռնը XIX դարի վերջին սկսված և XX դարի սկզբին շարունակվող Հայոց ցեղասպանության թուրքական պետական քաղաքականության կիզակետն էր, որը հանդիսանում էր նախօրոք կազմված պետական ծրագրի արդյունք: Թուրքական պատմագիտության և դիվանագիտության պաշտոնական դիրքորոշման հիմքում, սակայն, մինչ օրս ընկած է ժխտողականության սկզբունքը, որը նպատակ ունի 1915–1916 թթ. տեղահանություններն ու կոտորածները ներկայացնել որպես պատերազմական իրավիճակի, և ոչ թե՝ մշակված ծրագրի արդյունք[1]: Այն հերքելու տեսանկյունից կարևորվում են Օսմանյան կայսրությունում գործող դաշնակից և չեզոք պետությունների դիվանագիտական և ռազմական գործիչների հաղորդումները, զեկուցագրերը: Դրանց ուսումնասիրությունն ու համադրությունը ցույց է տալիս, որ 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանության համար համաշխարհային պատերազմը հանդիսանում էր առիթ և ոչ թե պատճառ:

Դեռևս 1915 թ. սկզբին օտարերկրյա դիվանագիտական գործիչները, հենվելով թուրք պաշտոնյաների արտահայտությունների և պաշտոնավարած շրջաններում իրականացվող գործողությունների վրա, փաստում են պետության ներքին քաղաքականության մեջ հայ ժողովրդի բնաջնջման մշակված ուղեգծի առկայությունը: Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուն իր հուշերում նշում է, որ թուրք պաշտոնյաներն իր հետ զրույցի ժամանակ կողմ են արտահայտվել ոչ թուրքերի դեմ իրականացվող բռնություններին, որոնց

---

[1] Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ենթագիտումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 38:

իրականացման ծրագիրը քննարկվել է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղտնի ժողովների ժամանակ[2]: Հիրավի, բրիտանական արխիվներում պահպանված մի փաստաթուղթ վկայում է, որ 1915 թ. հունվարի սկզբներին երիտթուրքերը գաղտնի ժողովի ժամանակ ընդունել էին «տասը հրամաններ», որոնք հայերի հանդեպ պետական քաղաքականության ողնաշարն էին կազմում: Դրանք էին՝ լուծարել ընկերությունները, ձերբակալել բոլոր հայերին՝ անկախ այն բանից, գործել են կառավարության դեմ, թե՝ ոչ, աքսորել և ոչնչացնել նրանց ճանապարհին կամ նշանակման վայրերում: Այնուհետև, խնդիր էր դրվում համապատասխան միջոցներով գրգռել մահմեդականների հասարակական կարծիքն ընդդեմ հայերի և հրահրել կազմակերպված կոտորածներ, իսկ դրանք կատարելու համար կարգ ու կանոն պահպանող զինված ուժերին օգտագործել առերևույթ: Նախատեսվում էր միջոցներ ձեռնարկել հայ պաշտոնյաներին պաշտոնանկ անելու, 50 տարին չբոլորած բոլոր տղամարդկանց, քահանաներին և ուսուցիչներին բնաջնջելու համար: Եվ թուրքական հայասպան քաղաքականության թերևս ամենանենգ դիտավորությունը՝ «Ամենուր գործողությանը ձեռնամուխ լինել միևնույն պահին, որպեսզի պաշտպանողական միջոցների դիմելու համար ժամանակ չհատկացվի»[3]:

1915 թ. մայիսի 10-ին Հալեպում գերմանական հյուպատոս Վ. Ռյոսլերը նշում է, որ կառավարության հակահայկական տրամադրությունների թիրախը բոլոր շրջանների հայերի ոչնչացումն է[4]: Հյուպատոսի այս փաստարկն արժեքավոր է նրանով, որ մինչ մայիսի 10-ը թուրքական կառավարության կողմից հայ խաղաղ բնակչության դեմ ուղղված որևէ պաշտոնական որոշում կամ հրաման չէր հրապարակվել: Տեղահանության մասին օրենքը՝ որպես կառավա-

---

[2] Տե՛ս Morgenthau H., Ambassador Morgenthau's Story, New York, 1918, էջ 175: Ալեքսանդրետի գերմանական հյուպատոս Հ. Հոֆմանը 1915 թ. հոկտեմբերին նշում է մի գաղտնի համաձայնության մասին, ըստ որի բոլոր տեղահանվածները դատապարտվել էին մահվան (տե՛ս Dadrian V., Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources, New Brunswick, 1994, էջ 105):

[3] Սեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918), հ. I, աշխատասիրությամբ Ա. Պեյլերյանի, Երևան, 2005, էջ 27–28:

[4] Տե՛ս Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources, էջ 106:

ության հանցագործ գործունեությունն իրավական դաշտ բերելու գործիք, ընդունվել է միայն մայիսի 14-ին (27-ին): Այսինքն, դեռևս մինչև օրենքի հրապարակումն, օտարերկրյա դիվանագետն ականատես էր դեպքերի կամ տեղյակ էր ինչ-որ ծրագրի մասին, ինչն էլ հիմք էր տալիս նրան նման եզրակացություն կատարել: 1915 թ. մայիսի 25-ին Հ. Մորգենթաուն պետքարտուղարին ուղղած զեկուցագրում փաստում էր, որ Օսմանյան կայսրությունում բնակչության տեղահանության տեսքով տարվում է ավելի *հետևողական* քաղաքական ուղեգիծ, քան նախկինում[5]: Տեղահանություններին թերահավատություն էր ցուցաբերում նաև գերմանական դեսպան Հ. Վանգենհայմը: Դրանք իրականացնելու ձևից 1915 թ. հուլիսի 7-ին դեսպանը եզրակացնում է, որ կառավարությունը հետապնդում է հայ ժողովրդի լիակատար ոչնչացման նպատակ: Հ. Մորգենթաուն 1915 թ. հուլիսի 10-ին զեկուցում է պետքարտուղարին, որ կոտորածները ոչ թե պատասխանն են ժողովրդի կամ ֆանատիկոսների պահանջների, այլ ուղղորդվում են Կ. Պոլսից՝ ռազմական անհրաժեշտության անվան տակ, հաճախ այն շրջաններում, ուր անհավանական է, որ ռազմական գործողություններ տեղի կունենան[6]:

1915 թ. օգոստոսի 31-ին Օսմանյան կայսրությունում իտալահպատակների պաշտպանության հանձնակատար Ֆ. Տալիանին հավաստում է, որ իշխանություններն արգելում են Կոստանդնուպոլսից ցանկացած մեկնում: Նշենք, որ, սկսած մարտ ամսից կառավարության հրահանգների համաձայն, կայսրության ցանկացած բնակիչ առանց հատուկ թույլտվության չէր կարող ազատորեն տեղաշարժվել ներքին նահանգներում: Այդ միջոցառումն ուղղված էր հատկա-

---

[5] Տես Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին, կազմ. և ներած. հեղ.՝ Տ. Զաքարյան, Երևան, 2002, էջ 31: Երիտթուրքերի դատավարության ժամանակ բացահայտվում է, որ «տեղահանություն»-ը «կոտորած»-ի կամ «ոչնչացնել»-ու ծածկագիրն է: Այսինքն՝ տեղահանության նպատակը ոչնչացումն էր (Dadrian V., Documentation of the Armenian Genocide in Turkish Sources, New York, 1991, p. 89): Երիտթուրքական պարագլուխները դատապարտվել էին ոչ թե տեղահանության իրականացման, այլ դրա քողի տակ կոտորած կազմակերպելու պատճառով (Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբ., թարգմ. և ծանոթ. Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988, էջ 152):

[6] Տես Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին, էջ 36:

պես հայ ժողովրդի դեմ: Սակայն հանձնակատարը, փաստորեն, իր զեկուցագրում բերում է կառավարության հաջորդ քայլը՝ երկրից դուրս գալն արգելելը: Տալիանին տեղեկացնում է նաև արտգործնախարարին, որ խոսք է գնում համաներման մի հրամանի մասին, որը կառավարությունը պետք է ընդունի[7]: Նույն օրը Թալեաթ բեյի հետ հանդիպումից հետո, ավստրոհունգարական դեսպան Պալավիչինին նրա դատողություններից եզրակացնում է, որ հայերի դեմ դաժան գործելակերպը պետք է դադարեցվի միայն այն պատճառով, որովհետև բոլոր այն հայերը, որոնք կա՛մ որպես հեղափոխականներ ու պետության թշնամիներ, կա՛մ որպես տնտեսական անցանկալի մրցակից, ասպարեզից վերացվել են[8]: 1915 թ. հոկտեմբերի 6-ին Լորդերի պալատում Ջ. Բրայսը հայերի կոտորածը որակում է՝ կանխամտածված և պարբերաբար իրականացված անպատկառ արկածախնդիրների մի հրոսակախմբի կողմից, որը տնօրինում էր Օսմանյան կայսրության կառավարությունը[9]: Անգլիացի գործիչը նշում է նաև, որ տեղահանության վերջնակետերն էին ընտրվել այնպիսի վայրեր, որտեղից վերադարձն անհնար էր, և քչերը կարող էին դիմանալ դրանց դժվարություններին[10]:

1915 թ. սեպտեմբերի 28-ին Տալիանին զեկուցում է արտգործնախարար Սոննինոյին աննախադեպ մի իրադարձության մասին: Թուրքական սենատի նիստի ընթացքում սենատոր Ահմեդ Ռիզա բեյը պահանջել է, որպեսզի կառավարությունը բացատրություն տա Համաձայնության երկրների դեմ պատերազմ սկսելու պատճառների և *հայերի դեմ իրականացվող հալածանքների համար*: Նիստից հետո Թալեաթը կանչել է սենատորին և հայտարարել, որ եթե նա շարու-

---

[7] Տես Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913–1923, կազմ. Բալոյան Ա., հ. Ա, Երևան, 2008, էջ 169:

[8] Տես Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին, էջ 55:

[9] Toynbee A. J., նշվ. աշխ., էջ 6: Լորդ Բրայսի զեկույցի տեքստն առկա է նաև իտալական վավերագրերում (տես Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913–1923, էջ 180–181, ինչպես նաև՝ Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում (1915–1918 թթ.), էջ 17–23):

[10] Տես Toynbee A. J., նշվ. աշխ., էջ 9: Տես նաև Bryce J., նշվ. աշխ., էջ 643:

նակի պնդել իր առաջադրած խնդիրների քննարկման վրա, ապա նախարարը կհրապարակի որոշ փաստաթղթեր, որոնք մուսուլման բնակչությանը կհրահրեն բնաջնջել բոլոր հայերին: Ֆ. Տալիանին ենթադրում է, որ Ահմեդ Ռիզա բեյին սպառնացել են մահապատժով: 1915 թ. նոյեմբերի 2-ին Ադրիանապոլսի ավստրոհունգարական հյուպատոս Նադամլենցկին տեղեկացնում է, որ ողբացող և կիսախելագար հայերի արտաքսմանը ներկա էին կոմիտեի տեղի դպրոցի սաները. «Որ այդ երեխաներին կոմիտեական դաստիարակություն տրվի», - բացեիբաց բացատրել է դպրոցի տնօրենը[11]: Այս դրվագի նկարագրությունը հաստատում է Օսմանյան կայսրությունում տարվող հակահայկական քարոզչության մասին, որը ներարկվում էր նաև երիտասարդ սերնդին՝ հիմք ստեղծելով թուրքական հայաջինջ քաղաքականության շարունակականության համար:

Օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչները հանցագործության նպատակի մասին տեղեկանում էին նաև թուրք բարձրաստիճան պաշտոնյաներից: Նոյեմբերի 7-ին ավստրոհունգարական դեսպան Պալավիչինին գրում է արտգործնախարարին, որ Օսմանյան խորհրդարանի նախագահ Հալիլ փաշայի հետ հանդիպման ժամանակ վերջինս հայտարարել է, որ Թալեաթը ձգտում է Հայկական հարցը պատերազմի ընթացքում իր ձևով լուծել և տերություններին կատարված փաստի առջև կանգնեցնել[12]: Մեծ Բրիտանիայի Ռազմական նախարարությանը հղած 1916 թ. մայիսի 20-ով թվագրված մի գաղտնի զեկուցագիր հաստատում է տեղահանության քողարկիչ բնույթը և փաստում, որ այն իրականացվել է տեղական իշխանությունների կողմից՝ ի կատարումն անձամբ ներքին գործերի նախարարի հրամանի: Զեկուցագրում նշվում է նաև, որ Թալեաթը հանդիմանում է «ստահակ պաշտոնյաներին», որոնք դիմել են ծայրահեղությունների հրամանների իրականացման ընթացքում[13], բայց

---

[11] Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources, p. 109: Տես նաև՝ Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին, էջ 80:

[12] Տես Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին, էջ 84:

[13] «Երիտթուրքերի դատավարության ընթացքում ներքին գործերի մինիստրության հատուկ գրասենյակի պետ Իհսան բեյը հաստատում է, որ այն ժամանակ, երբ ինքը

չի եղել մի դեպք, որ նման որևէ մեկը պատժի ենթարկվի[14]: Ընդհակառակը, Անկարայի և Կոնիայի կառավարիչները հրամանին չենթարկվելու պատճառով փոխարինվել են նորերով[15]: Այսինքն, ոչ թե պատժվում էին հանցագործ պաշտոնյաները, այլ նրանք, ովքեր անտեսում էին հայերի տեղահանություններն առավել խիստ ձևով իրականացնելու պետական հրամանը:

1916 թ. նոյեմբերի 13-ին գերմանական հյուպատոս Ռադովիցը ռայխսկանցլերին գեկուցում է, որ գերմանական զինվորական առաքելության գեներալ Լիման Օտտո ֆոն Սանդերսը միջամտել էր Զմյուռնիայում տեղահանությանը և սպառնացել վալիին դիմել զենքի ուժին, եթե հայերի հանդեպ կամայականությունները և ծերբակալությունները շարունակվեն, ինչը ստիպել է թուրք պաշտոնյային տեղի տալ: Վալին, սակայն, բացատրել է ֆոն Սանդերսին, որ տեղի երիտթուրքական կոմիտեն միշտ դժգոհ էր հայերին խնայելու իր քաղաքականությունից և իր դիրքերը խաթարվել են Կոստանդնուպոլսում, որտեղից եկել է հրամանը: Գեներալն, այնուհետև, հայտնում է հյուպատոսին, որ եթե նրան դրան դրդում են Կոստանդնուպոլիսից, ապա տեղահանության համար այլ ճանապարհներ կընտրվեն[16]: Բնականաբար ընտրվեցին, քանի որ հայերի կազմակերպված ոչնչացման պատճառն ավելի խորն էր: Դրա մասին է վկայում 1916 թ. դեկտեմբերին էրզրումում գերմանական փոխհյուպատոս Շյոբ-

---

Քիլիսի կայմակամն էր, Ստամբուլից Հալեպ գործուղված Աբդուլահադ Նուրի բեյը հայտարարել է, որ «տեղահանման հիմնական նպատակը [հայերի] ոչնչացումն է» և ավելացրել է նաև, որ ինքն այդ հարցով կապի մեջ մտնելով Թալաաթ բեյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորածի հրաման, որ նա [Թալաաթը] ձգտել է համոզել իրեն, որ դա է երկրի փրկությունը» (Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 40):

[14] Տես Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918), էջ 302:

[15] Տես նաև երիտթուրքերի դատավարության 1919 թ. հունիսի 3-ի մեղադրական եզրակացությունը. «Կառավարությունը ոչ միայն չի պատժել և արգելել այդ կոտորածներն ու կողոպուտները սանձազերծող հանցագործներին, այլ ընդհակառակը, պաշտոնից հեռացրել է այն վալիներին և մութասարիֆներին, որոնք պատասխանատվությունը իրենց վրա հանձն առնելով, հրաժարվել են գործադրել այդ տեղահանություններն ու կոտորածները» (Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 109–110):

[16] Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915–1918), կազմող Վ. Միքայելյան, Եր., 2004, էջ 168:

ներ-Ռիխտերը: Համաձայն դիվանագետի՝ երիտթուրքական կոմիտեի մեծ մասն այն տեսակետին էր, որ թուրքական կայսրությունը պետք է լինի զուտ մահմեդական, պանթյուրքիզմի հիմքի վրա կառուցված և ոչ մահմեդական ու ոչ թուրք բնակիչները պետք է թրքացվեին, իսկ այնտեղ, որտեղ դա հնարավոր չէր՝ ոչնչացվեին[17]:

Այսպիսով, օտարերկրյա դեսպանների և հյուպատոսների զեկուցումների համադրությունը գալիս է հաստատելու, որ Հայոց ցեղասպանության ընթացքում իրականացված տեղահանությունը և կոտորածը, որպես հայ տարրի բնաջնջման մեթոդներ, նույնանում էին իրենց արդյունքով: Իսկ երիտթուրքերի դատավարության ընթացքում երկու սպաների հաղորդագրությունների վերծանումը հաստատել է, որ առաջինը երկրորդի ծածկագիրն էր: Կոտորածը նման աղետալի չափերի կարող էր հասնել միայն պետական հովանավորչության և նախապես լավ կազմված ծրագրի գոյության պայմաններում: Ինչպես ցույց տվեցին վերոնշյալ զեկուցագրերը, ցեղասպանություն իրագործելու նպատակով թուրքական կառավարությունը նախապես մշակել և հետևողականորեն իրականացնում էր որոշակի միջոցառումներ. արգելափակում էր երկրից դուրս գալ ցանկացողների ելքը, որպեսզի նվազեցնի հայ ժողովրդի ներկայացուցիչների փրկության հավանականությունը, պատերազմի քողի տակ կազմակերպում և վերահսկում էր տեղահանությունը, տեղերում հրամանին չենթարկվող թուրք բարձրաստիճան պաշտոնյաներին փոխարինում էր նորերով, ընտրում էր տեղահանության համար ամենաանբարենպաստ ճանապարհները և կայանատեղիները, որպեսզի հնարավորինս քչերը հասնեին վերջնակետին, իսկ պակասը լրացնում էր բանակը՝ զինված քրդերին, չեթեներին և քրդական զգեստ հագած թուրք զինվորներին ուղղորդելով հատուկ այդ նպատակի համար: Հստակ է նաև, որ հայ ժողովրդի ոչնչացման տեղահանության ձևն ընտրվել էր հետագայում թուրքական պետության արդարացման նպատակով:

---

[17] Տե՛ս նույն տեղում, էջ 178:

REGINA GALUSTYAN

THE PREMEDITATION OF THE ARMENIAN GENOCIDE ACCORDING TO PUBLISHED DIPLOMATIC DOCUMENTS OF THE GREAT POWERS

SUMMARY

The Armenian Genocide of 1915–1916 was the culmination of the massacre of Armenians fulfilled in the Ottoman Empire from the end of XIX to the first half of the XX centuries. It was the result of Turkish state's premeditated program.

РЕГИНА ГАЛУСТЯН

ПРЕДУМЫШЛЕННОСТЬ ГЕНОЦИДА АРМЯН 1915–1916 ГГ. ПО ОПУБЛИКОВАННЫМ ДИПЛОМАТИЧЕСКИМ ДОКУМЕНТАМ ВЕЛИКИХ ДЕРЖАВ

РЕЗЮМЕ

Геноцид армян 1915–1916 является кульминацией осуществленного в Османской империи геноцида в конце XIX – начале XX века. Геноцид являлся результатом предумышленной политической программы турецкого государства. Весомое значение имеют официальные доклады дипломатических и военных представителей союзнических и нейтральных государств в Османской империи. Исследование и сопоставление этих документов обосновывает тот факт, что Первая мировая война являлась поводом, а не причиной геноцида армян 1915–1916 гг.